ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

<<ԽԵԼԱՑԻՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ>>

1-քայլ

Սկզբի համար արկղից քաշելու ենք թուղթը ու վիճակահանությամբ ընտրենք Արմավիրի մարզին պատկանող գյուղերից 9 գյուղ և մեկ դպրոց Արմավիր քաղաքից:

Նշված տասը դպրոցներին հեռագիր ենք ուղարկում և տեղեկացնում սպասվելիք մինչմարզային մրցույթի մասին;

թիմերը կազմվելու են տվյալ համայնքի ուսուցչական անձնակազմի ,համայնքային կազմի ազատ ընտրությամբ ՝ թիմը կազմված է լինելու 10 հոգուց, 10 աշակերտներ,որոնք լինելու են 14 - 18 տարիքային շեմին համապատասխան;

Ամեն դպրոցի թիմին կհանձնարարվի լինել կոնկրետ գույնի հագուստով՝օրինակ ՆՈՐԱՎԱՆԻ թիմ՝ նարնջագույն,

թիմը ունենալու է ավագ

2 - քայլ

հեռագրում նշում ենք, որ դպրոցը պարտավոր է ՝ երկու օրվա ընթացքում հետադարձ հաստատել իրենց թիմի մասնակցությունը, ու երբ երկու օր անց հաստատվում են թիմերը, մենք նրանց ուղարկում ենք մրցույթի ձևանմուշ՝այսինքն նրանք գլոբալ առումով պատկերացում են կազմում ինչ ոլորտում և ինչ ֆորմատով են մրցելու բայց հստակ մրցակցության ձևը չենք նշելու,նաև տալու ենք հավելյալ խորհրդատվություն հատկապես ինչի վրա կենտրոնանալ:

ՄՐՑՈՒՅԹԻ կարգը

մրցույթը կանցկացվի երեք փուլով երեք տարբեր օրեր,

1 մրցույթի փուլ- ինտելեկտուալ ու տրամաբանական հարցեր,որոնք պիտի լուծվեն թիմային մակարդակում

2-մրցույթ-Արվեստ՝ երաժշտական պայքար,կինո և գրականություն ոչ միայն թեորապես այլև կատարողական,ու մտքի արագության փորձարկմամբ

3-մրցույթ- կիսասպորտային վարժանքների պայքար,արագություն,կողմնորոշում,մտքի արագություն մարմնի պլաստիկա ու իրավիճակի արագ դրսևորում

ամեն ինչ որոշվվելու է հստակ միավորներով

մրցույթի առաջին օրը տասը թիմից լքելու են երեքը

մրցույթի երկրորդ օրը յոթը թիմերից լքելու են 4-ը

իսկ եզրափակիչ փուլ անցնելու են երեք թիմեր և թեժ պայքարի արդյունքում հաղթող դառնալու է միայն մեկ թիմ

այդ հաղթող թիմին կսպասվի հանգստյան ճանապարհորդություն և խրախուսական մրցանակ

ՆԱՊԱՏԱԿ

1- Արմավիրի մարզի երիտասարդության մեջ փորձի փոխանակում ստեղծելը,մշակութային կյանքի աշխուժացումը;

2-դպրոցականներին փորձի խոխանակման և իրենց ուժերը փորձելու հնարավորություն ընձեռելը

3-դպրոցականների մոտ մոտիվացիա ստեղծելը :